**ԱՐՄԱՆ ՄԱԿԱՐՅԱՆ**
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
գեղարվեստական կրթության ֆակուլտետ
ՀՏԴ 75.056

# ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂՈՒՑ ՄՈՌԱՑՎԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ «ՏԱՐՕՐԻՆԱԿ» ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ («ԱՒԵՏԱԲԵՐ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ»)

**Բանալի բառեր և արտահայտություններ.** «Աւետաբեր տղայոց համար» պարբերական, նկարազարդումներ, վախ, սարսափ, կյանք, մահ, երեխայի հոգեբանություն, նշանային համակարգ:

**Ключевые слова и выражения:** журнал «Вестник для детей», иллюстрации, страх, ужас, жизнь, смерть, психология ребенка, семиотическая система.

**Key words and expressions:** periodical “For Precursor Children”; illustrations; fear; horror; life; death; child’s psychology; semiotic system.

Հայտնի է, որ գրական տեքստի ընկալումները սովորաբար տարբեր են մարդկանց մեջ, բայց խնդիրն ավելի է սրվում մանուկների պարագայում: Երեխաները և մեծահասակները՝ որպես ընթերցող, գտնվում են զգայական հեռավոր դաշտերում. տարբեր են նրանց թե՛ ընկալումներն ու մոտեցումները տեքստին և թե՛ վերաբերմունքը բովանդակության նկատմամբ: Տարիքի գործոնը մեծ դեր է խաղում երևակայության ու նկարագրվող դեպքերի ասպարեզում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է հավատքին: Եթե մեծահասակը գիտի գեղարվեստական ստեղծագործության մեջ կերպավորված ձևական իրականության պայ-մանական ու մտացածին լինելու մասին և հավատ չի ընծայում դրան, ապա

երեխան (կախված տարիքային խմբից) հավատում է դեպքերի ճշմարտացիությանը: Այս կետում բնականաբար տարբերվում է մանկագրի աշխատանքը, որի առջև դրված առաջնային խնդիրը երեխայի հավատի միֆը չկոտրելն է և մանկան երևակայության միջոցով հեղինակ-տեքստ-ընթերցող շղթայով գաղափարի ու խրատի անցումն ապահովելը:

Եթե հասուն ընթերցողի պարագայում ստեղծագործությունը բաց համակարգ է, և հեղինակը նպատակ չունի իր ասելիքը հնարավորինս պարզ ու մատչելի ներկայացնելու, ապա մանկագրության համապատկերում հասցեագրվող «դասը» պետք է կառուցված լինի որոշակի կանոններով և օրինաչափություններով՝ երեխայի քիմքին ու աշխարհընկալմանը համապատասխան[1]: Այս տեսանկյունից տեքստը դառնում է ընթերցողին ուղղված նշանային ուրույն համակարգ, որը կրում է մանկանը հասցեագրված հեղինակային խրատը՝ արտահայտված բովանդակությամբ, կերպարային համակարգով և պատումի մակարդակով:

Մանկական երկերը երեխաներին դաստիարակելու յուրօրինակ միջոցներ են, նրանց մտահորիզոնում որոշակի գաղափար կամ տեսակետ սերմանելու բանալի: «Հենվելով մարդու էության հոգեվերլուծական մոդելի վրա՝ հեքիաթները կարևոր հաղորդագրություններ են հասցեագրում գիտակցական, ենթագիտակցական ու անգիտակցական մակարդակներին: Անդրադառնալով մարդկային համընդհանուր խնդիրներին (հատկապես նրանց, որ մտահոգում են երեխաներին)՝ այդ պատմությունները խոսում են նրանց նոր ձևավորվող «ես»-ի հետ և նպաստում դրա զարգացմանը՝ միևնույն ժամանակ ձերբազատելով ենթագիտակցականի և անգիտակցականի ճնշումներից: Տեքստի բացահայտմանը զուգընթաց՝ նրանք մարմնական և

[1] Տե՛ս **Wall B.,** The Narrator's Voice, New York, "Palgrave Macmillan", 1991, էջ 13:

գիտակցական հավաստիություն են տալիս «այն»-ի ճնշումներին՝ ցույց տալով դրանք բավարարելու ուղիները՝ «ես»-ին և «գերես»-ին համապատասխան»[2],- իրավացիորեն նկատում է մանկական հոգեբան Բրունո Բեթելհեիմը:

Մանկական երկերի այդ նշանային համակարգի կրողն են դառնում նաև ստեղծագործություններին կցված նկարները, որոնք երեխաների հետ «հաղորդակցվում են ավելի բնական և նպատակային, քան բառերը՝ այդպիսով օգնելով փոքրիկ ընթերցողներին հասկանալու ուղեկից տեքստի իմաստը»[3]: Ավելին, այդ նկարազարդումները սոսկ տեքստերի բովանդակային և գաղափարական տարրերի արտապատկերումը չեն, այլ ունեն ինքնուրույն արժեք, կրում են կառուցվածքային էական հատկանիշներ, օգնում են երեխային տեսնելու և գիտակցելու դրանք[4]: Ասել է թե՝ մանկական գրականության համապատկերում ստեղծագործություններին կցված նկարներն ստանում են կարևոր նշանակություն և լրացնելով տեքստին՝ խոսում երեխաների հետ պատկե-րային լեզվով:

Եվ ահա մեր հոդվածը նվիրված է հեռավոր՝ 1872-1915-ին Կոստանդնուպոլսում հրատարակված և արդեն վաղուց մոռացված ու դեռևս ուսումնասիրության նյութ չդարձած «Աւետաբեր տղայոց համար» մանկական ամսագրում տպագրված նկարների[5] քննությանը և պարզել, թե ինչ ազդեցություն են դրանք ունեցել երեխաների աշխարհընկալման ու հոգեբանության վրա:

---

[2] **Bettelheim B.,** The uses of Enchantment, New York “Vintage books”, 2010, p 6.
[3] Understanding Children’s literature, New York, 1999, p 70.
[4] Տե՛ս **Arnheim, R**., Art and Visual Perception: A Psychology of the Creative Eye, “Berkeley University of California Press”, էջ 14:
[5] Ուսումնասիրել ենք պարբերականի՝ 1873-1888 թթ. հրատարակված համարները:

«Աւետաբեր տղայոց համար»-ը հրատարակում էին ամերիկացի միսիոներներ Է. Բլիսը, Ջ. Գրինը, Հ. Բարնըմը, Հ. Ալենը և ուրիշները. այն «Աւետաբեր» լրագրի (1855-1895) մանկական հավելվածն էր: Պարբերականը հայատառ էր, որոշ դեպքերում նաև պատկերում էր հայկական միջավայր, հերոսները հայ երեխաներ էին՝ Անի, Արմենակ, Հայկանուշ, Անդրանիկ, բայց ոգին, ցավոք, հայկական չէր: Գրական-գեղարվեստական հատուկենտ ստեղծագործությունների կողքին (օր.՝ «Հավիկը» հեքիաթը, որ ռուսական բանահյուսական հեքիաթի մշակում էր) հիմնականում տեղ էին գտնում աստվածաշնչյան թեմաները, որ միստիկ պատմություններով հոգեբանական վախ էին ներշնչում երեխաներին (օր.՝ «Չար ոգին») կամ բողոքականության գերակայությունն ու կարևորությունը նրբորեն ընդգծելով՝ գեղեցիկ հեքիաթներով փաստում սեփական եկեղեցու ճշմարիտ լինելը (օր.՝ «Փոքրիկ Մարիամը»):

Որպես հրատարակման շարժառիթ ունենալով այդ գաղափարը՝ հեղինակները պարբերականը ծառայեցնում էին նույն խնդրին՝ համապատասխան օրինաչափություններով ու կառույցով ձևավորելով այն և այդ համակարգում ստեղծագործությունների կողքին նշանակալից դեր տալով նաև նկարներին: Ուշագրավ է, որ ամսագրի հեղինակներն իրենք շեշտում էին նկարների կարևորության արժեքը՝ գրելով. «Կ՚ուզեմ, որ տղայք, փոքր տղայք պատկերները զննել սորվին. այսինքն զանոնք խնամքով դիտելով անոնց մէջ եղած ամէն բան տեսնեն»[6]: Փաստորեն գեղարվեստական և հրապարակախոսական երկերից բացի՝ **«լեզու էին առնում» նաև նկարները**:

[6] «**Աւետաբեր տղայոց համար**», Կ. Պոլիս, տպ. Արմեանի, 1875, № 8, էջ 32:

Ամսագրի հեղինակները դաստիարակության հարցում մեծ դեր էին հատկացնում վախի գործոնին և խաղալով երեխաների երևակայության հետ՝ սարսափի միջոցով փորձում հետ պահել նրանց այս կամ այն «արատավոր» երևույթներից:

Վախը յուրօրինակ միջոց է, որ ստեղծագործությունն իրականությունից չտարանջատող երեխային նվազագույն ժամանակում հնարավորինս ազդու կերպով հաղորդակից է դարձնում գեղարվեստական գործի ներքին իմաստին կամ հեղինակի խրատին: Որդեգրելով այդ գաղափարը՝ պարբերականի հրատարակիչները գեղարվեստական և ոչ գեղարվեստական երկերում շեշտադրում էին սարսափի գործառույթը, որն ավելի էր ընդգծվում կից հրատարակվող նկարներում. եթե տեքստը «խոսում էր բառերով», ապա պատկերների դեպքում գործողությունները «տեսանելի էին դառնում»:

Բնական է, որ միսիոներների կողմից հրատարակվող ամսագրի առաջնային ուղղվածությունը կրոնականն էր. հրատարակիչները կենտրոնական դեր էին հատկացնում աստվածաշնչյան թեմատիկային և փորձում երեխաների հոգում հավատ սերմանել դեպի քրիստոնեությունը:

Նկ. 1. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1873, № 8
(«Կուռք մը»)

Այդ նպատակով նրանք պարբերաբար հոդվածներ էին հրատարակում տարբեր կրոնների մասին՝ փորձելով ցույց տալ դրանց խարխուլ հիմքերը, և ամբողջական հաջողության համար կից տպագրում էին դրանց աստվածների նկարները:

«Կուռք մը» նյութին կից տպագրված նկարում, օրինակ, պատկերված աստվածությունը հակասում է քրիստոնեական «Աստված սեր է» քարոզին և բարի Աստծո փոխարեն ներկայացնում է երեխայի աչքերում հրեշի նման-վող մի արարածի: Նկար 1-ում կերպարն անհամաչափ է պատկերված. նախ՝ փոքր մարմինն ունի մեծ գլուխ, և ապա՝ հնարավորինս արտահայտիչ են աստվածության բերանն ու ատամները, որոնք երեխայի ընկալմամբ ունեն մարդուն վնասելու և ուտելու, վիրավորելու գործառույթներ: Պատկերը, անշուշտ, առնչություն ունի Հավայան կղզիներում դեռևս 18-րդ դարում հայտնաբերված տեղացիների՝ վայրագ ցեղերի՝ «Տիկի» կոչվող կուռք-աստվածների քանդակների հետ, որոնք ամերիկացի միսիոներների պատկերացմամբ՝ ազդեցիկ ու սարսափեցնող ներգործություն պիտի թողնեին մարդկանց և հատկապես երեխաների վրա:

Նկ. 2. Հավայան կղզիների Տիկի կոչվող արձաններ

Նկարում կարևորվում է նաև պատվանդանի դերը, որի վրա դրված է կերպար-աստվածը: Դա շեշտում է, որ այն իրական, կենդանի չէ, այլ պատրաստված է մարդու ձեռքով և ունի կարևոր՝ մոնումենտալ քանդակի նշանակություն:

Նկարին զուգահեռ երեխաների՝ աստվածության հանդեպ հնարավոր հավատքը կոտրելու են գալիս հետևյալ տողերը. «Շատ յիմար պիտի երևայ ձեզի հիմա այն մարդը որ փայտը կտրելով ասանկ սոսկալի դէմք մը շինէ և

լմնցուցածին պէս անոր առջին խոնարհի ու երկրպագութիւն ընէ անոր իբրև իր Աստուածը»[6]:

Ք ր ի ս տ ո ն ե ա կ ա ն Ա ս տ վ ա ծ - կ ո ւ ռ ք ե ր հ ա կ ա դ ր ո ւ թ յ ո ւ ն ը շ ե շ տ վ ո ւ մ է ն ա ե ւ ո ւ ր ի շ ն կ ա ր ն ե ր ո ւ մ, ո ր տ ե ղ կ ո ւ ռ ք ե ր ը թ ե ւ ա յ դ ք ա ն ս ա ր ս ա փ ե լ ի չ է ն, բ ա յ ց ո ւ ն ե ն հ ր ե շ ա յ ի ն, կ ե ն դ ա ն ա կ ա ն պ ա տ կ ե ր:

Նկ. 3. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1876, № 7 («Բուլիար կուռքը»)

Նկ. 4. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1881, № 4 («Մողոք»)

Այս նկարազարդման մեջ նկատելի է իրականում գոյություն ունեցող բրահմայական վաղեմի քանդակների հանդեպ ծաղրանքը, չափազանցված երևակայությունը: Սա բացահայտ շեղում է, գուցե թերի իմացություն բուն երևույթի, այսինքն՝ հինդուիզմի և նրա պատկերագրության հանդեպ:

[6] **«Աւետաբեր տղայոց համար»**, 1873, № 8, էջ 30:

Համաձայն լեգենդի՝ փղի գլուխ ունեցող էակը՝ Գանեշան, որը գլխավոր երեք աստվածներից մեկի՝ Շիվայի որդին էր, կորցրել էր իր գլուխը մենամարտի ժամանակ, ինչի արդյունքում հայրը փոխարինել էր այն առաջին իսկ պատահած էակի՝ փղի գլխով[7]:

Ե՛վ հնդկական, և՛ հեթանոսական աստվածությունները մարդու և կենդանու՝ փղի ու առյուծի խառնուրդներ են՝ իրականության մեջ անհնարին և սարափելի արարածներ, որ նորից կերպավորված են որպես ոչ իրական արձաններ՝ ստեղծված մարդու ձեռքով:

Նկար 4-ում այդ հանգամանքն ավելի է շեշտվում, որտեղ առյուծ-մարդու կողքին տեղ են գտնում նրան երկրպագող մարդիկ. մի կողմում՝ մարդկային շարժումն ու կյանքը, մյուս կողմում՝ քարացած աստվածությունը:

Ամսագրի հեղինակները քրիստոնեությանը միտումնավոր հակադրում են անշարժ ու անիրական թվացող աստվածությունները և պատկերում դրանք հնարավորինս ոչ մարդկային և սարսափեցնող:

Ի տարբերություն կուռքերի՝ հրեշտակները մարդկային իրական կերպարանք ունեն և սարսափի փոխարեն դրական տրամադրություններ են արթնացնում: Նրանք կերպավորվում են ոչ թե ստատիկ դրության մեջ՝ քարացած, այլ գործողության պահի ընթացքում՝ շարժվելիս: Նկար 5-ում, օրինակ, հրեշտակները բերում են գալիք 1884 թվականը, որ կերպավորված է մանկան տեսքով, դրան զուգահեռ նրանց ձեռքերում առատությունը խորհրդանշող մրգեր ու բարիքներ են:

[7] Мифы Народов Мира. Энциклопедия. В 2-х томах / Гл. ред. С.А. Токарев, Москва, Большая Российская энциклопедия,1987, т. 1, с. 264.

Նկ. 5. **«Աւետաբեր տղայոց համար»,** 1884, № 1 («Նոր տարի»)

Ամսագրի հեղինակները վախի ազդեցությամբ են մատաղ ընթերցողների հոգում սերմանում նաև շնորհակալական զգացողությունները. հրատարակիչները վախեցնում են երեխաներին, որ վերջիններս շնորհակալ լինեն իրենց ունեցածի համար:

Նկ. 6. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1874, № 5 («Գերի աղջիկը»)

Նկ. 7. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1875, № 1 («Երջանիկ նոր տարի»)

Նկար 6-ում և 7-ում պատկերված են դժբախտ երեխաներ՝ գերի աղջիկը, որին տերը ծեծում և «ջրկիրի էշի» տեղ տանջում է, և աղքատ տղան, որ Ամանորի ճոխ սեղանի փոխարեն ցնցոտիներով է ու բոբիկ:

Խմբագիրները հակադրում են ընթերցող մանուկների առօրյան նրանց հասակակիցների չարքաշ կյանքին, որ միայնակ են ու անօգնական՝ այդպիսով հորդորելով նրանց ոչ թե բողոքել իրենց չունեցածից, այլ նայելով դժբախտ երեխաներին՝ շնորհակալություն հայտնել ունեցածի համար, որ իրենք էլ գերի կամ անտուն չեն: Դեռևս 19-րդ դարի սկզբին իսպանացի հանրահայտ գեղանկարիչ Ֆրանցիսկո Գոյան օֆորտների միջոցով առաջին անգամ հանրությանը ներկայացրեց իր «Caprichos» շարքը՝ վրդովված և հուզված նկարչի բողոքը մարդկային վախերի ու արատավոր երևույթների հանդեպ: Այս գրաֆիկական աշխատանքների ուղիղ շարունակությունը, թերևս նմանությունը կարող ենք նկատել նույն դարավերջում ստեղծված մանկական այս նկարազարդումներում: Անգամ գեղանկարչության հմտություններից անտեղյակ ընթերցողը կարող է զգացմունքների ու երևակայության միջոցներով միանգամից հասկանալ ստեղծագործության լեզուն՝ զգալ իմաստի ներգործությունը:

Պարբերականում վախի զգացողությունը հանդիպադրվում է նաև գերիրական երևույթներին: Գեղարվեստական տարբեր ստեղծագործություններ անդրադառնում են հանդերձյալ կյանքին (օր.՝ «Աներևոյթ արձանագրութիւնը») կամ չարքերին (օր.՝ «Սատանային զինուորներն»): Իսկ «Չար ոգին» գործում չար ոգին կերպավորվում է մանկան աչքերում:

Նկ. 8. **Աւետարեր տղայոց համար»**, 1875, № 4 («Չար ոգին»)

Նկարում պատկերված են երկու քույրերի զավակները՝ Կարապետը և Եղիսաբեթը, որ փոքր տարիքից վիճելու սովորություն ունեն: «Երբ իրարու ձեռքէ խաղալիկ մը յափշտակել կը ջանային, և կը բարկանային իրարու, անատեն կարծես թե չար ոգին կը նայէր անոնց աչքին մէջէն»[8]:

Գործի սյուժեում չար ոգուն հաղթել կարողանում են միայն մայրերը, երբ իրենց երեխաների աչքերում «չար ոգու բնակիլը» տեսնելուն պես սկսում են պարբերաբար աղոթել Աստծուն՝ խնդրելով, որ «Աստուած իր սիրոյ Հոգին թափէր անոնց սրտերուն մէջ»:

Նկարում Եղիսաբեթի աչքերում չարություն է պատկերված. փոքրիկ աղջիկը եղբորը հարվածում է ամենայն դաժանությամբ, իսկ Կարապետը փորձում է վախվորած թաքնվել:

[8] Նույն տեղում, № 4, էջ 16:

Ե՛վ գեղարվեստական երկում, և՛ նկարում երեխաների անմեղ չարությունը կերպավորվում է չար ոգու գործոնով՝ վերջիններիս աչքերում նրա բնակությամբ: Երեխան, պատմվածքը կարդալով և նկարին նայելով, կարող է եզրակացնել, որ հնարավոր է՝ իր ներսում նույնպես չար ոգին է բնակվում, և իր բոլոր սխալ քայլերը կապել անտեսանելի ոգու գոյությանը: Այս գործերով հեղինակները հավանաբար միտում են ունեցել երեխաներին հեռու պահել կռիվներից, խժդժություններից: Այդ տարիքի քույր և եղբոր միջև այդ վեճերը, սակայն, բնական են, և նման բովանդակությամբ տեքստն ու պատկերը կարող են սեփական անձից վախ ներշնչել մանուկներին:

Պարբերականի՝ մեր ուսումնասիրած համարներում վախի հաջորդ դրսևորումը կապվում է մահվան հետ:

Մանկական գեղարվեստական ստեղծագործություններում մահը դառնում է իրականությանը հարաբերվելու միջոց, երբ ձևական իրականության մեջ հանդիպադրվելով մահվան գործառույթին՝ երեխան համակերպվում է նաև իրական կյանքում դրա գոյության փաստին: Հեքիաթը դառնում է իրականության տարբեր անծանոթ կամ քիչ ծանոթ երևույթներին ծանոթանալու և դրանք հասկանալու բանալի[9]:

Մանկան տեսանկյունից կյանքն ամբողջական պատկեր է, չխաթարվող շղթա, որը հարատև է և չի կարող ընդհատվել, ու մանկական գրականությունն է ստանձնում այդ հարատևության հնարավոր աղճատումների և կյանքի շղթայի ընդհատման գիտակցության ձևավորման դերը: Երեխան առաջին անգամ մանկական ստեղծագործություններում է առերեսվում մահվանը:

---

[9] Տե՛ս **Bettelheim B.,** The uses of Enchantment, էջ 8:

Ուսումնասիրվող պարբերականում կյանքի և մահվան հնարավոր հարաբերությունները պատկերվում են ստատիկ ամբողջականության՝ երկրի ավերման միջոցով, երբ անշարժ ու հաստատուն թվացող երևույթները սկսում են խարխլվել:

1755 թվականի նոյեմբերի 1-ին Լիսաբոնում տեղի էր ունեցել աղետալի մի երկրաշարժ, որի հետևանքով մահացել էր շուրջ 90.000 մարդ: Այդ ողբալի իրադարձություն վերաբերյալ առկա են գրական բազմաթիվ երկեր, նաև գեղանկարչական և գրաֆիկական մի շարք աշխատանքներ՝ կատարված թե՛ նույն ժամանակաշրջանում, թե՛ հետագայում: Ահա այդ ստեղծագործություններից մեկն իր տեղն է գտնում նաև «Աւետաբեր տղայոց»-ում: 19-րդ դարի ռոմանտիզմին բնորոշ մարդու վեհ պայքարը աղետների հանդեպ, սահմռկեցուցիչ տեսարաններն ու վախ ներշնչող երևույթները նկարիչների կողմից ներկայացվում էին զարմանալի վարպետությամբ, ներազդում էին դիտողի վրա՝ ստեղծելով աշխարհաընկալման նոր չափանիշներ:

Նկ. 9. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1886, № 6 («Լիսպոնայի երկրաշարժը»)

Նկ. 10. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1888, № 8 («Կենաց նաւակ»)

Նկ. 11. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1888, № 1 («Սառնակոյտի զարնուիլ»)

Բերված նկարներում կերպավորված է կյանքի և մահվան սահմանագիծը՝ երբ ապահով ու հաստատուն թվացող երկիրը տատանվում ու քանդվում է երկրաշարժից, իսկ «կենաց նաւակը»՝ բախվում ալիքների զորությանն ու կանգնում կործանման եզրին: Բոլոր պատկերներն արհավիրքի պահին են՝ կյանքի և մահվան սահմանագծին, երբ այդ երկու երևույթները բախվում են միմյանց, և հարցականի տակ է մնում շարունակությունը. փրկվեցի՞ն հերոսները, թե՞ ոչ:

Նկ. 12. **«Աւետաբեր տղայոց համար»**, 1887, № 11 («Սբ. Բարդողիմէոի կոտորածը»)

Այս նկարները ընթերցող երեխայի մտահորիզոնում կերպավորում են կյանքի անցողիկության ու մահվան հնարավորության գիտակցությունը:

Դրանք դառնում են կյանքն ու մահը կապող, կյանքի աղճատումը և վտանգը ահազանգող նշաններ, բայց պարբերականում հրատարակված նկարներն ունեն նաև առաջինի վախճանն ու մյուսի սկիզբը խորհրդանշող բովանդակություն:

Եթե վերոհիշյալ երեք նկարներում կենաց և մահու սահմանագիծն էր կերտված, մահը կերպավարված էր որպես հնարավոր և օրինաչափ երևույթ, ապա ստորև բերվողներում մահվան պատկերն է՝ որպես գործողություն և վիճակ. նկար 12-ում մահվան գործընթացն է՝ սպանությունը, իսկ մյուսներում՝ դրա արդյունքը՝ դիակը:

Նկ. 13. **«Ուեստարի տուտակ դատարկ»**, 1876, № 9 («Գարի վարդ»)

Նկար 13-ում և 14-ում ընթերցող երեխան տեսնում է ոչ միայն մահվան հնարավորությունը կամ սպանության պահը, այլև անշնչացած մարմինը, թե ինչ է լինում մարդու հետ մահվանից հետո:

Պարբերականում քրիստոնեական բարոյախոսությամբ բազմիցս կերպավորվում է հանդերձյալ կյանքը՝ Աստծո դատաստանը, դրախտը, բայց այս նկարները մանկան առաջ բացում են մարմնական մահվան տեսարանը՝ անկյանք դիակ և ոսկորներ:

Նկ. 14. **«Աւետաբեր տղայոց համար»**,
1876, № 6 («Չոր ոսկորներ»)

Այսպիսով, 19-րդ դարի երկրորդ կեսին պոլսահայ գաղթօջախում կրոնական օտար գործիչների կողմից հրատարակվող հայկական առաջին պարբերականներից մեկում հանուն հավատքի զետեղված և հիմնականում վախի ու սարսափի զգացողություններ ծնող նկարազարդումները աղավաղում էին մանկական ներաշխարհը. դրանք երեխաների մեջ կարող էին առաջացնել իրարամերժ ընկալումներ, իսկ միստիկ պատմությունները՝ թողնել հոգեբանական վախի ավերիչ ազդեցություններ:

**Ա. Ա. Մակարյան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂՈՒՑ ՄՈՌԱՑՎԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ «ՏԱՐՕՐԻՆԱԿ» ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ («ԱՒԵՏԱԲԵՐ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ»)

**Ամփոփում**

Հոդվածը նվիրված է Կ. Պոլսում 1872-1915 թվականներին հրատարակված «Աւետաբեր տղայոց համար» մանկական ամսագրում տպագրված որոշ նկարների քննությանը: Քանի որ մանկական գրականության համապատկերում զանազան ստեղծագործություններին կցված նկարներն ստանում են կարևոր նշանակություն և լրացնելով տեքստին՝ երեխաների հետ խոսում են պատկերային լեզվով, ուսումնասիրության ընթացքում բացահայտվում է, թե դրանք ինչ ազդեցություն են ունեցել երեխաների աշխարհընկալման ու հոգեբանության վրա: Եզրակացվել է, որ պարբերականի՝ կրոնական երկյուղածությամբ տոգորված նկարազարդումները կարող էին հոգեբանական վախի ու սարսափի զգացողություններ ծնել մանուկների մեջ՝ այդպիսով աղճատելով նրանց ներաշխարհը:

**А. А. Макарян**

## «СТРАННЫЕ» ИЛЛЮСТРАЦИИ К ОДНОМУ ДАВНО ЗАБЫТОМУ АРМЯНСКОМУ ДЕТСКОМУ ЖУРНАЛУ («БЛАГАЯ ВЕСТЬ ДЛЯ ДЕТЕЙ»)

**Резюме**

Статья посвящена анализу некоторых иллюстраций к издаваемому в 1872-1915 годах в Константинополе детскому журналу. Поскольку в панораме детской литературы большое значение приобретают иллюстрации к произведениям, дополняющие текст и «говорящие» с детьми образным языком, в процессе анализа раскрывается их воздействие на мировосприятие и психологию детей. Приходим к выводу, что иллюстрации к журналу, пронизанные религиозностью, могли породить в психике детей чувства страха и ужаса, тем самым искажая их внутренний мир.

**A. A. Makaryan**

**THE "STRANGE" ILLUSTRATIONS OF AN ARMENIAN LONG FORGOTTEN PERIODICAL FOR CHILDREN ("FOR PRECURSOR CHILDREN")**

**Summary**

The article is dedicated to the study of some pictures printed in a magazine for children entitled "For Precursor Children" published in Constantinople in 1872-1915. As in the context of literature for children pictures attached to various creations get serious importance and by supplementing the text do speak with children in pictographic language, the study reveals their influence on the children's world perception and psychology. It is concluded that the illustrations imbued with religious piety could have given rise to psychological fear and horror in children thus distorting their inner world.